ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

11 դեկտեմբերի 2014թ N. 134
Ք. Եղեգնաձոր,

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի N-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ա. Երիցյանի 2014թ. դեկտեմբերի 9-ի 01/15/6606-14 հանձնարարականը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, հունվարի 1-ից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի :
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014թվականի

դեկտեմբերի --11--- -ի N134կարգադրության

2015թ. հունվարի 1-ից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ անցկացվող անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու համար և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը.

1. Ներսիսյան Մարատ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
2. Ղազարյան Առուշան ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Վայոց ձորի մարզային գործակալության պետ /համաձայնությամբ/
3. Սիմոնյան Նորիկ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ -ի և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության պետ
4. Խաչատրյան Գոհար ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
5. Ավագյան Հովիկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ /համաձայնությամբ/
6. Եղյան Խորեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Անասնաբուժասանիտարիայի սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզային մասնաճյուղի տնօրեն / համաձայնությամբ/
7. Մելքոնյան Մեսրոպ ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Անասնաբուժա-սանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզային մասնաճյուղի Եղեգնաձորի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
8. Իխտիարյան Հովհաննես ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Անասնաբուժա-սանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզային մասնաճյուղի Վայքի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Կ. ՍԱՀԱԿՅԱՆ**